Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 02/1
/վարչական տույժ նշանակելու մասին/

«5» հունվար 2022թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Աղասի Աղայանս, քննելով Արմեն Հայկի Գրիգորյանի (անձը հաստ. փաստ. AT0408494, հասցե՝ Արմավիրի մարզ գ. Քարակերտ, Գ. Նժդեհի փ 11 տուն) նկատմամբ հարուցված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արմեն Հայկի Գրիգորյանի անվամբ թիվ 05100033/170821/0029505 տարանցման հայտարարագրով Բագրատաշենի մաքսային կետ-բաժին անցակետով ՀՀ տարածք է ներմուծվել 37 կգ քաշով ապրանքներ, որոնք 18.08.2021 թվականին հանձնվել է մաքսային մարմինների ժամանակավոր պահպանությանը, սակայն մինչև ժամանակավոր պահպանության ժամկետի լրանալը ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնին չի ներկայացվել:

ՀՀ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վաչության բացթողնման բաժնի գլխավոր մաքսային տեսուչի կողմից 21.12.2021 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի հատկանիշներով:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը Արմեն Հայկի Գրիգորյանի մասնակցությամբ քննելու համար նշանակվել է գործի քննություն, ինչի տեղի ու ժամանակի մասին սահմանված կարգով ծանուցագիր է ուղարկվել Արմեն Հայկի Գրիգորյանի գտնվելու վայրի հասցեով, սակայն նրա կողմից միջնորդություն չհարուցելու, բացակայելու և գտնվելու վայրի մասին այլ տեղեկություններ չլինելու արդյունքում, 05.01.2022 թվականին ժամը 10:00-ին գործը քննվել է նրա բացակայությամբ:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը հաշվարկվում է ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվան հաջորդող օրվանից և կազմում է 4 ամիս՝ բացառությամբ սույն Օրենսգրքի սույն հոդվածի 2-րդ կետում և 259-րդ հոդվածում նշված դեպքերի:

Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մինչև ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետի լրանալը կամ սույն Օրենսգրքով սահմանված այլ ժամկետում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաև մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը՝ անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով:

Այսպիսով, մաքսային կանոնների խախտման գործի վարույթի նյութերով հիմնավորվում է, որ Արմեն Հայկի Գրիգորյանը սահմանված ժամկետում Բագրատաշենի մաքսային կետ-բաժին անցակետով թիվ 05100033/170821/0029505 տարանցման հայտարարագրով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար մաքսային հայտարարագիր չի ներկայացրել, որի արդյունքում թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով, 218-րդ հոդվածով 1 կետով, 219-րդ հոդվածով, 221-րդ հոդվածի 1 կետի ա) ենթակետով և ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 234 հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու Արմեն Հայկի Գրիգորյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով **50.000** ՀՀ դրամի չափով:

2. Որոշման մասին հայտնել Արմեն Հայկի Գրիգորյանին՝ պարզաբանելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշումն ուժի մեջ է մտնում այն կայացնելու պահից և համաձայն նույն օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին (պաշտոնատար անձին) կայացնելուց հետո 10 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

3. Որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է **900005024055-ը (ՀՀ պետական բյուջե, կենտրոնական գանձապետարան, Արարատյան մաքսատուն-վարչություն, ԿՈԴ 27)**:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ

ԱՂԱՍԻ ԱՂԱՅԱՆ